

ՏԵՇԿԱՀԱՅՐ

ԴԵՊԵՑԵԲԸ ՏԱԶԿԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴՆԸ

Անցեալ տարուայ յուլիսին կատարուած յեղաշրջումն, բռնակալական—միահեծան կառավարութեան սահմանադրական—պարլամենտական կազմի վերածուելը առանց տրիւնհեղութեան, ազգերի պատմութեան մէջ բացառիկ երեսութներից մէկն էր, մանաւանդ, եթէ և նկատի ունենանք, որ գահի վրա բազմած Առևլթան Համիդը 32 տարի անընդհատ իր երկաթեայ ճիրաններով սեղմել, արիւնքամ էր արել իր հարազատներին և հպատակներին։ Սակայն այդպիսի հաճոյակատարութեամբ Արդ-իւլ-Համիդի սահմանադրութեան վերականգնումը շատերը համարում էին մի խաղ, մի միջոց յանկարծակիի եկած զօրաբանակների յուղումը գագարեցնելու համար։ Շատերը սպասում էին յեղաշրջման—coup d'Etat-ի և վերջին ամիսներում արդէն միժնոլորտը Տաճկաստանում այնքան խտացել, երիտասարդ-թուրքերի գէմ գժգոհութիւնն այնքան աճել էր, որ նուրբ քաղաքագէտները արդէն գուշակում էին մօտալուտ վտանգը, երկրի ներսը սահմանադրութեան ամբողջ ընթացքում ըստ երեսյթին թէե խաղաղ, բայց հին օրերի բոլոր գործողութիւնները կատարում էին։ Հայկական գաւառների դրութիւնը չէր լաւանում, իսկ տեղ տեղ՝ Մարաշում, Մուշում, և Աղանայում նոյն իսկ թշնամական ցոյցեր էին լինում քրիստոնեաների, ի մասնաւորի հայերի գէմ։ Այս բոլորից պարզ էր, որ գաղանը մեռած չէր, այլ քնած էր ձեռանում։ Նա առ երեսս իրան երիտասարդ Թուրքիայի հովանաւորող յայտարարելուց յետոյ, ներքուստ մեքենայութիւններ էր լարում գլուխ վայր տապալելու սահմանադրութիւնը։

Բոլոր զրկուած, պատուազուրի, գործից հեռացած բաղմաթիւ ստորին և քարձրաստիճան անձինք խոհեմու-

թեամբ առ երեսս հնագանդուելով նոր կարգերին, դաւ-
ւեր էին նիւթում և հող պատրաստում նախկին բեժիւմը
վերականգնելու համար։ Եւ հոգեորականները, պահպա-
նողականները, կրօնական մոլեռանդները կարողացան մա-
սամբ ծուռ մեկնութիւն տալով սահմանադրութեան, մա-
սամբ սոկիների փայլով վաշնել զինուորներից մի մասին
և հող պատրաստել ապագայ յեղաշրջման համար։

Եւ ահա ուժ տմսեայ մխացող կրակը հրդեհեց մարտի
31-ին և մի օրում ստեղծուած սահմանադրութիւնը մի
օրում՝ էլ ի չիք դարձաւ և եթէ Բարդուղիմէոսեան դի-
շերներ տեղի չունեցան Պօլուում, այդ պիտի վերագրել
այն հանդամանքին, որ Սուլթանի կողմնակից յեղաշրջում
առաջ բերող տարրերի մէջ շատ շուտ պառակաւմն առաջ
եկաւ և երիտասարդ թիւրքերը առանց ժամանակ կորց-
նելու ժողովեցին իրանց ուժերը հակահարուածը տա-
լու Մի ցաւայի երեսոյթ, որ պիտի տեղի չունենար, եթէ
պոքը ինչ հեռատեսութիւն լինէր, այդ ազատամիտ (ահ-
րար) կուսակցութեան մասնակցութիւնն էր յեղաշրջման
գործին։ Վերջինս իր ծրագրով ու գաղափարներով աւելի
ձախ կանգնած լինելով քան երիտասարդ թիւրքերը, որի
մէջ մտնում էին համարեա բոլոր օտարազգի հպատակ-
ները և որոնք չեին բաւականանում սահմանադրութեամբ,
այլ նոյն իսկ բոլոր ազգութիւնների դաշնակցական պե-
տութիւն էին քարոզում, ահա այդ կուսակցութիւնը ե-
րիտասարդ թիւրքերի կուսակցութիւնը տապալելու ցան-
կութեամբ անհեռատեսութիւն ունեցաւ ձեռք մեկնելու
րէկոսիօն տարրերին և արագացնելու իրանց համար ան-
սպասելի յեղաշրջումը։ Բարեբազգաբար նօքա շատ շուտ
զգացին այդ սխալը և երկրորդ օրն և եթ ձեռք մեկնե-
ցին երիտասարդ թուրքերին։

Ապրելի 14-ին առանց արիւնի հաստատուած սահ-
մանադրութիւնը արիւնով վերահաստատուեց և որպէս զի
այլ ևս չկրկնուեն նման դէպքեր, վճռուեց մէջտեղից վե-
րացնել Տաճկաստանի չար ողուն, նախկին սուլթան Աբդ-

իւլ-Համբիդին, զրկելով նրան գահից՝ Գահ բարձրացաւ նրա եղբայր Ռաշիմը Մոհամմետ Ա սիւննով։

Նա, ով 32-տարի շարունակ միահեծան հրամայող էր, որի մատի շարժումից դողում էին արքայազուններից սկսած մինչև յետին նախորդը, որ այդքան ձիգ տարի ներ իր հպատակ անմեղ հայերի արիւնով ներկեց իր առունը և այնքան վարպետորէն խաղացնում էր ամբողջ երսպային, այսօր մի պատուառ բանտարկեալ է Սելանիկի մէջ Ալլադինի ազարանքում։

Պօլսում երիտառարդ թիւրքիան յազթանակ տարաւ և խաղաղեց, բայց գաւառները . . . այնտեղ գեռ նոր է հասնում մարտի 31-ին արձագանքը և գեռ այդ ուղղութեամբ գործողութիւններ են կատարւում, ամբոխը, լսելով Պօլսում կատարսւած դէպքերը և չուզելով յետ մեալ, յարձակումներ է գործում անգէն, խեղճ, ազատութեան երազներով օրորուող ազգաբնակութեան վրա։

Առաջին հարուածը կրեց Ադանայի քրիստոնէութիւնը, մանաւանդ հայերը և ով գիտէ, մինչև տալրելի 14-ի լուրը կհասնի հեռաւոր վայրերը, այն տեղերը չեն ներկայացնի մի սոսկալի սպանդանոց Բոլոր պարբերական թերթերը լի են երկիւզալի նախագուշակումներով և Ադանայի կոտորածի սարսափներով։ Ադանայի սպանուածների թիւը տասնեակ հազարներ են հաշում։ Հինգ օր անընդհատ կատորած, հրձիգութիւն և աւարառութիւն է տեղի ունեցել. բազմաթիւ գիւղեր ի չկը են դարձել Արդեռք ի՞նչ չափեր կընդունի այս հրէշաւոր գործողութիւնը, որ գերազանցում է 94—95 թուերի սարսափներին, գժուար է այժմենից գուշակել։

Կոտորածը Ադանայի մէջ «Գործի» սեպհական թըղթակիցը հետեւեալն է գրում. Զարհուրելի լուրեր կհասնեն Ադանայէն։ Օրերով կատորած, թալան և հրդեհ քանդաւեր ցրած են քաղաքը երկու օր առաջուան թըղթակցութեանս մէջ տեղեկութիւն տուած էի արդէն այդ

կոտորածի մասին։ Վերջին հեռագիրներէ՝ որոնք հաղիւ հազ հասած են Պօլիս, կերեայ թէ աղետը մնձ համեմատութիւններ ստացած է։ Ինչպէս գրած էի, երկու թիւրբեր՝ ուղելով հայ պատանիի մը վրայ յարձակում գործել, այս վերջինը ինքզինքը և իր պատիւը պաշտպանելու համար սպաննած է զանոնք։ Այս գէպքը բաւական եղած է, որպէսզի թիւրբ խուժանը կեաւուրներու վրայ յարձակում գործէ, կոտորածը սկսի, ինչպէս նաև հրդեհը և աւարառութիւնը, «Մանզումէի» տեղեկութեան նայելով, այս եղանակիս շրջակայ գաւառներէ ալ հազարաւոր մշակներ Աղանոյի գաւառը գացած կըլլան՝ բամբակի մշակութեան գործի համար, այս պատճառաւ հաւանական կը նկատուի, որ խուժանը շատ ահեղ եղած ըլլայ, կըսուի նաև թէ այնտեղի հայերը լաւ զինուած են, հաւանական կը նկատուի որ գիմագրութիւն եղած ըլլայ, Ամեն պարագայի մէջ, այս «կըսուին» ստուգութեան կը կարօտի, և հայերու անձի կորուստը հազարաւոր թօւերի կը հասնի։ Սպաննած են նաև երկու ամերիկացի միսիօնարներ, որոնք Աղանա կը գտնուէին, և հոյ բողքաբականներու կիլիկիոյ միութեան պատգամաւորական ժողովը գումարելու վրայ էր։ Հայ-հումէականներու պատրիարքարանը ուղղուած հեռագիր մըն ալ բոլորովին աւերուած կը ներկայացնէր քաղաքը, ժողովուրդը սարսափահար և անօթի եկեղեցները տպաստանած է։ Այս միջոցիս Աղանոյի նահանգին առաջնորդ Մուշեղ Կպիսկ. Ալէքսանդրիա (Եգիպտոս) կը գտնուի։ Աւելի ահռելին այն է որ կոտորածը միայն Աղանայի մէջ չէ սահմանափակուած։ Մէրսինի մէջ ալ սկսած է արդէն, և անզլիական հիւպատոսն ալ պառյախ ելած տաեն վիրաւուուած է։ Իսկ Աղանայի շրջակայ գաւառներէն շարունակ հեռագիր կը տեղայ, թէ կոտորածը տարածուելու վրայ է, և ամենքն ալ երկիւզի մէջ են։ Միսի կաթողիկոսն ալ նոյն իմաստ հեռագիր մը ուղղած է։

Կառավարութիւնը անկարող գտնուած է զոպելու խոռոշութիւնը, վասնզի զինուոր անբաւական է։ Տեղիս երօպա-

կան լիդուով, մէկ թերթին տեղեկութեան նայելով, զի՞նուորն ալ միացած է խուժանին:

Կեդրոնի կառավարութիւնը հրամաններ ուղղած է այլ տեղեր, որ զինուոր ճամբայ հանուի գէպի Ադանաւ Օտար տէրութիւններ մէկ, մէկ մարտանաւ զրկած են Մէրսինի առջև, Մինչև այժմ մանրամանութիւններ կը պակսին:

* * *

Պօլսոյ պատրիարքական տեղապահ Արշարունի առաջի որ Դուռ գնաց և գիմում ըրաւ եպարքոսին և ներքին գործոց նախարարութեան խորհրդականին Ասոնք խոստացան թէ պէտք եղած հրամանները պիտի ուղղեն:

Ներքին գործերու նախարարութեան խորհրդական Ադիլ պէյ, որ ուրիշ առիթներու մէջ հայերու բողոքներուն նկատմամբ չըկամութիւն ցոյց տւած է, գարձեալ տեղապահին յայտարարեց թէ կոտորածին պատճառը հայերը եղած են, թէ ինք այն տեղերը պաշտօնավարած ըլլալով. գիտէ, որ այնտեղ հայերը ամենքն ալ զինուած են, և թէ հայերն են, որ կը կոտորեն թիւրքերը:

Երեկ ալ, աղդ, երեսփոխ. ժողովոյ անդամները, ինչպէս նաև հայ-հռոմէականներու պատրիարքարանի և հայքողոքականներու ազգապետարանին ներկայացուցիչներ խառն ժողով մը գումարելով, որոշեցին միանաբար գիմում ընել Դուռ և բողոքելու Քիչ ետք արդէն խառն պատգամաւորութիւն մը գնաց տեսակցեցաւ եպարքոսին և պահանջեց, որ խիստ և աղդու միջոցներ տնօրինուին Ադանայի գէպքին նկատմամբ Եպարքոսը հաւասարեց թէ ամեն միջոց ձեռք առնուած է արդէն, թէ զինուոր սկսած է զըրկուիլ, և այլն Յայտարարուած է նաև թէ Ադանայի կուսակալը և Մէրսինի կառավարիչը պաշտօնանկ պիտի ըլլան:

Երեկ պետական երեսփ. ժողովին մէջ ալ կարգ մը երեսփիսանների կողմէ ստորագրուած զեկուցագիր մը կարգացուեցաւ Ադանայի գէպքին նկատմամբ, և ժողովին

որոշման համաձայն, քիչ ետք տասը թիւրք երեսիոխանան ներ իրենց կարգին Դօւռ գացին, և եպարքուէն պահանա ջեցին, որ Աղանայի կոտորածին նկատմամբ զսպողական միջոցները փութացուին։ Միենոյն հաւաստիքները տրուեցան առողջ ալ։

Յայտնի չէ, թէ ինչ շարժառիթներ երկու տարրերու միջև այդ տաելութիւնն առաջ բերած են, և թէ ռէաքսիոնի ու ձեռք մըն է արդեօք, որ սկսած է գործել գաւաներու մէջ այս աղէտալի հետեւանքները ստեղծելու համար։ Վարչապետը երեսիու, ժողովին մէջ այսօր կարգացած յայտարարագրին մէջ ըստ, թէ Աղանայի գէպը հետեւանքն է Պոլսոյ գինուրական վերջին շարժման։ Գ.

Հեռագիրները լուր բերին, որ ջարդել են կազմակերպուած Աղանայում։ Քաղաքի երկու երրորդը հրդեհի մէջ է։

Խռովութիւնը տարածուած է Մէրսինում, Տարօնամ և շվակաները։

Աղանայում սպանուած են երկու ամերիկեան միսուրուարներ, վիրաւորուած է անգլ. հիւպատոսը։

Կաթուղիկոսի, կաթողիկների ներկայացուցչի հեռագիրները յուղեցին հայ ազգաբնակութիւնը, ու երեք կրօնական ներկայացուցիչներ՝ լուսաւորչականների, կաթուղիկների և բողոքականների, իրենց հետ ունենալով մի քանի հոգևորականներ և աշխարհականներ՝ կազմեցին մի պատգամաւորութիւն։ Դուռ երթալու։

Պատգամաւորութիւնը վերջապէս կարողացել է տեսնուել եպարքոսի և ներքին գործերի նախարարութեան խորհրդական Ադիլ բէյի հետ։

Հայ պատրիարքարանից ուղարկուած հեռագիրները տեղ չեն հասել։

Զարդը սկսուել է անցեալ երկուշաբթի օրը և տեղ է հինգ օր։

Բողոքել են պատգամաւորները, բողոքել են նաև,

թէ ինչու հեռագրուած է, որ միայն պաշտպանութիւն ցոյց տրուի օտարահալատակներին և օտար հաստառաթեանց, և այդ պաշտպանութիւնը լուռ կերպով խնայուի հայրենիքի սրդիների համար:

Պաշտօնեաները ամբաստանել են հայերին, որ ջարդի պատճառը նրանք են, որ կոտորուողների մեծ մասը մահամեդականներ են և այլն, (Պ.1.)

Ադանայում՝ կարճատե. Հանգստութիւնից յետոյ, իրերի դրութիւնը ամենալուրջ կերպով վատթարացաւ Ապրիլի 13-ին սպանվեց 2000 հոգին կոտորածի ժամանակի տեղի էին ունենում ամենասուկալի գաղանութիւններ. Աննկարագրելի կարիք է տիրում Դրութիւնն առանձնապես բարդանում է նրանով, որ թիւրք զինուորները մասնակցում են հայերի հալածանքներին վախենում են, որ զօրքերը կը յարձակուեն հայերի վրա, որոնք թագնուած են միսսիօներական համայնքի շինութեան մէջ. Հայերը հեռանում են նաև Մէրսինից, —ուր առայժմ ամեն ինչ հանգիստ է — դէպի կիսլոս և Բէյրութ։ Ադանայի գերման լէվանտեան բամբակագործութեան գրասենեակը քարուրանդ է արուած և կողովտուած։ Օտարազգինեւը վախենում են իրանց կեանքի համար (Հ. Գ.) (Մ.2.)

«Թայմսին» հազորդում են Մէրսինից ապրիլի 13-ին, որ այնտեղ գնացած թիւրքական երկու գնդերը անցեալ շաբաթ օրը մեկնեցին Ադանա և լոյս կիրակի գիշերը այնտեղ ապրող հայերի մէջ սոսկալի կոտորած սարքեցին. Հայերի դոյքն ու ստացուածքն այրուած են. կրակում զսուել են մօտ հազար հայեր։ Փախչելու վորձ անողներին զինուորները գնդակահարել են։ Ամբողջ Ադանայի վիլայէթում մօտաւոր հաշուով սպանուել է մօտ երեսուն հազար մարդ։ Շատ մեծ են նաև երօպացիների նիւթական կորուստները» (Հ. Գ.) (Մ.2.)

Մէրսինից՝ հիւպատոսական զեկուցումների համեմատ, Ադանան համարեա ամբողջապէս կրակի ճարակ է դարձած։ Հայերը ամբողջապէս սրի են քաշուել Եղուիտների և Սուրբ ժողէֆինայի օրդէնի մի քանի կաթոլիկ միսոխոնէրական հիմնարկութիւններ կրակի դոհ են գնացել։ Մարդիկ ազատուած են։ (Հ. Գ.) (Մշ.)

Խօնդօնից խփուած հեռագիրը գուժում է, որ հայերի կոտորածը Ադանայում սոսկալի է եղել, որ անցեալ շաբաթ օր, ապրիլի 11-ին, ափ իջած թիւրքական զօրքերը կիրակի օրը, ապրիլի 12-ին, ահոելի կոտորած սարքեցին հայերի մէջ։ Միայն կրակի մէջ այրուել են հազար հոգի հայեր, իսկ փախչել փորձողները գնդակահար էին լինում դինուորների ձեռքով։

Ապա հեռագիրը գուժում է, որ ամբողջ Ադանայի վիլայէթում սպանված են մօտ 30,000 մարդ։ (Մշ.)

—Պօլիս, 17 ապրիլի Թերթերի ասելով, զինուորական գատարանին կից կազմուած քննիչ մասնաժողովը երեան է հանել Արդիւլ Համիդի անմիջական զեկավարութիւնը մարտի 31-ի դաւադրութեան մէջ։

Երեան է հանուած նաև շաբաթ, ապրիլի 11-ին մայրաքաղաքի քրիստոնեայ ազգաբնակութեան կոտորելու նախապատրաստութեան փաստը։

Նատ խօջաների և Պերայի ու Դալաթիայի մեծ շինութիւնների դռնապահներին ռումբեր են բաժանուած եղել։

Այդ ռուբերի պայմանները մտադրուել էին կատարել շաբաթ գիշեր և այդ վերագրել հայերին. այնուհետեւ յաջորդ օրը ցերեկով սկսել հայերի կոտորածը, ինչպէս նաև օտարահպատակների։

Թերթերը հաւատացնում են, որ իբր հրացանի բըռնուածների թիւը 50-ից չի անցնում. հրացանազարկ են անում միայն մարդաբաններին։

Նոր պալատի աւագ-արարողապետի կոչումը պահպանել է նախկինը՝ Հալիբ-փաշան։ (Պ.)